# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №8-Լ

«30» 01 2023 թ.

ք. Երևան

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի դատախազությունում 2022 թվականի ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում կատարելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգի 39-րդ կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Լոռու մարզի դատախազությունում իրականացնել 2022 թվականի ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ստուգումն իրականացնելու համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով՝

***Հանձնախմբի ղեկավար՝***

**Արմեն Մարուխյան** – ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

*Հանձնախմբի անդամներ՝*

| | |
|---|---|
| **Վահագն Մուրադյան -** | ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ |
| **Լևոն Չարխիֆալակյան -** | ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ |
| **Աշոտ Ժամկոչյան -** | ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ |
| **Վարուժան Ղահրամանյան -** | ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի պաշտոնին գործուղված դատախազ |
| **Վահագն Պողոսյան -** | ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ |
| **Էդուարդ Գասպարյան-** | ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ |
| **Արմեն Օսեյան -** | ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ: |

3. **Հանձնախմբի անդամներին՝** ստուգումն իրականացնել մինչև 2023թ. մարտի 1-ը և արդյունքներով կազմված տեղեկանքը ներկայացնել հանձնախմբի ղեկավարին:

4. **Հանձնախմբի ղեկավարին՝** մինչև 2023թ. մարտի 15-ը ստուգման արդյունքներով կազմել ամփոփ տեղեկանք և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

5. Սույն հրամանի պատճենը տրամադրել Լոռու մարզի դատախազին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

**Ա.Վարդապետյան**